ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 հուլիսի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

102
(3311)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ՈՒԺԵՂ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ը ՉԻ ԾՏԱՊՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրների փոխանցմամբ՝ ուրբաթ կամ շաբաթ նախատեսվում է «Ուժեղ Հայաստան» խմբակցության հանդիպումը գործարար Սամվել Կարապետյանի հետ, որի ընթացքում պետք է քննարկվեն ոչ միայն քաղաքական առաջնահերթությունները, այլեւ խորհրդարանում բաժանվելիք առանցքային պաշտոնները:

Մեր տեղեկություններով՝ Սամվել Կարապետյանը, նախքան խորհրդարանի անդրանիկ նիստին մասնակցելը, ցանկանում է անձամբ հստակեցնել իր թիմի հետագա անելիքները եւ վերջնական համաձայնության բերել ապագա պաշտոնական նշանակումների հարցերը: Փաստացի, «Ուժեղ Հայաստանի» ներսում առանցքային որոշումները կայացվում են ոչ թե խորհրդարանական հարթակում, այլ թիմի քաղաքական «կենտրոնում»:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ արդեն իսկ որոշում կա, որ Ազգային Ժողովի փոխնախագահի պաշտոնում «Ուժեղ Հայաստանը» կառաջադրի պատգամավոր Արամ Վարդեւանյանի թեկնածությունը: Եթե այս որոշումը վերջնական հաստատվի, Վարդեւանյանը կդառնա ընդդիմադիր դաշտից նոր խորհրդարանի ամենաբարձր պաշտոններից մեկի հավակնորդը:

Նույն աղբյուրների փոխանցմամբ՝ «Ուժեղ Հայաստան» խմբակցության ղեկավարի պաշտոնը նախատեսվում է վստահել Նարեկ Կարապետյանին: Խմբակցության քարտուղարի հարցում դեռեւս վերջնական որոշում չկա, սակայն այս պահին ամենաքննարկվող թեկնածուն պատգամավոր Տիգրան Աբրահամյանն է:

Այս բոլոր նշանակումները պետք է վերջնական քննարկվեն Սամվել Կարապետյանի հետ սպասվող հանդիպման ընթացքում, որից հետո միայն խմբակցությունը կմասնակցի օգոստոսի 2-ին կայանալիք Ազգային Ժողովի անդրանիկ նիստին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ հայտնել էր, որ ԱԺ փոխնախագահ Հայկ Կոնջորյանի եղբոր՝ Ավետ Կոնջորյանի ծեծի գործով անցնող 5 մեղադրյալներն ազատ են արձակվել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը պատրաստվում է առաջիկա օրերին գործով մեղադրյալներին եւ Ավետ Կոնջորյանին դեմ առ դեմ հարցաքննել: Ըստ մեր տեղեկությունների՝ գործի քննության այս փուլում առերեսումներն անխուսափելի են համարվում: Ավելի վաղ «Ժողովուրդ»-ը տեղեկացրել էր, որ նախաքննական մարմինը Ավետ Կոնջորյանին ծեծի ենթարկելու գործով ձերբակալված 5 անձանց ազատ է արձակել: Նրանցից երկուսի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է բացակայելու արգելքը եւ բավականին քիչ՝ սիմվոլիկ 2 միլիոն դրամ գրավը: ՀՀ քննչական կոմիտեն պաշտոնապես հայտնել էր, որ ՔՊ-ական պատգամավոր Հայկ Կոնջորյանի եղբորը՝ Ավետ Կոնջորյանին, ծեծի ենթարկելու վերաբերյալ քրեական վարույթով 5 մեղադրյալ կա, 5 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով՝ մի խումբ անձանց կողմից ֆիզիկական ներգործություն կատարելու համար:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթն ուսումնասիրել է ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ներկայումս նաեւ նախագահի աշխատակազմի ղեկավարի պարտականությունները կատարող Խաչատուր Պողոսյանի հայտարարագրերը՝ հասկանալու համար, թե ինչպես է փոխվել նրա գույքային եւ ֆինանսական դրությունը 2021-2025 թվականներին: 2021 թվականի հայտարարագրի համաձայն՝ Խաչատուր Պողոսյանն ունեցել է համատեղ սեփականությամբ բնակարան Երեւանի Շենգավիթ վարչական շրջանում, որը ձեռք է բերել 2008 թվականի օգոստոսի 12-ին, ինչպես նաեւ միանձնյա սեփականությամբ ավտոտնակ նույն վարչական շրջանում, որը ձեռք է բերել 2005 թվականի օգոստոսի 24-ին: Այդ ժամանակ նա տրանսպորտային միջոց, բանկային ավանդ, բանկային հաշիվների մնացորդ, արժեթղթեր, ներդրումներ, փոխառություններ կամ թանկարժեք գույք չի հայտարարագրել: Միակ դրամական միջոցը եղել է 4 մլն 900 հազար դրամ կանխիկ գումարը, որը տարվա սկզբին եւ ավարտին նույն չափով պահպանվել է: Նրա տարեկան եկամուտը կազմել է 9 մլն 951 հազար 268 դրամ, որը ստացել է հանրապետության նախագահի աշխատակազմից՝ աշխատանքի վարձատրության տեսքով: Վարկեր, փոխառություններ եւ խոշոր ծախսեր եւս հայտարարագրված չեն:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Ադրբեջանի խորհրդարանում կրկին մանդատ է ստացել Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը: Սակայն նրա քաղաքական ուղին հետաքրքիր է ոչ միայն այն պատճառով, որ նախկին լրագրողը դարձավ իշխանական պատգամավոր, այլ նաեւ այն պատճառով, թե ինչպես են այդ տարիներին փոխվել նրա ունեցվածքն ու ֆինանսական հնարավորությունները: Գաբրիելյանը մինչեւ 2018 թվականը աշխատել է լրագրողական ոլորտում. սկզբում՝ «Ա1+»-ում, ապա՝ «Ազատություն» ռադիոկայանում որպես լրագրող եւ հաղորդավար: 2019 թվականին «Իմ քայլը» դաշինքի ցուցակով նա դարձավ պատգամավոր, իսկ 2021-ին վերընտրվեց արդեն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակով: Այն ժամանակ նրա հայտարարագրած ունեցվածքը բավական համեստ էր. Շենգավիթում համատեղ սեփականությամբ բնակարան, 2014 թվականի Hyundai եւ շուրջ 7.7 մլն դրամ տարեկան եկամուտ: Սակայն պատգամավորական գործունեությունը չանցավ առանց սկանդալների: 2020 թվականի դեկտեմբերի 28-ին ԱԺ շենքի մոտ տեղի ունեցած միջադեպի ժամանակ քաղաքացիները ձու էին նետել Գաբրիելյանի ուղղությամբ, իսկ նա պատասխանել էր հայհոյախառն արտահայտություններով:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՊԱՏՐԱՍՏ Է ԿԻՐԱՌԵԼ ՅԱՆԿԱՑԱԾ ՄԻՋՈՑ»

Գագիկ Ծառուկյանի ձերբակալության հետ կապված՝ ArmLur.am-ը զրուցել է Տիգրան Աբրահամյանի հետ:

- Նախընտրական քարոզարշավի ընթացքում Նիկոլ Փաշինյանը հրապարակային հայտարարություններ էր անում Սերժ Սարգսյանի, Ռոբերտ Քոչարյանի, Սամվել Կարապետյանի եւ Գագիկ Ծառուկյանի մասին: Կարո՞ղ ենք ասել, որ այսօր տեսնում ենք այդ հայտարարությունների իրականացումը:

- Տարբեր փուլերում մենք ականատես ենք եղել նույն սցենարին: Քաղաքական ամբիոններից հրապարակայնորեն մատնանշվել են կոնկրետ անձինք, ապա իրավապահ համակարգը քաղաքական իշխանությունից ստացել է հրապարակային հանձնարարություն եւ անցել գործողությունների:

Այսօր ձեր թվարկած անձանցից յուրաքանչյուրը տարբեր քրեական վարույթների շրջանակում հետապնդումների է ենթարկվում: Սամվել Կարապետյանը գտնվում է սահմանափակումների ներքո, Սերժ Սարգսյանի նկատմամբ պարբերաբար նոր քրեական գործեր են հարուցվում, Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ քաղաքական հետապնդումները շարունակվում են: Այսինքն՝ այդ գործընթացները ոչ միայն հայտարարվել են, այլեւ արդեն իրականացվում են: Իսկ թե դրանք ինչպիսի զարգացումներ կամ սրացումներ կունենան, կախված է նրանից, թե տվյալ պահին իշխանությունն ինչն առաջնահերթ կհամարի:

Այս փուլում, իմ գնահատմամբ, իշխանության նպատակը երկուսն էր. առաջին՝ անել ամեն ինչ, որպեսզի «Բարգավաճ Հայաստանը» չհայտնվի խորհրդարանում եւ չփոխվի խորհրդարանական դասավորությունը, երկրորդ՝ցույց տալ, որ ցանկացած ուժ, որը կփորձի խնդիր ստեղծել իշխանության համար, կպատժվի՝ անկախ նրանից, թե ով է այդ մարդը, ինչ վաստակ ունի կամ ինչ գործունեություն է ծավալել:

- Այս իրավիճակում ընդդիմությունն ինչո՞ւ հիմնականում պայքարում է արդեն տեղի ունեցած հետեւանքների դեմ, եւ ոչ թե կանխարգելիչ քայլեր ձեռնարկում:

- Ես լիովին համաձայն եմ այդ դիտարկման հետ: Մեր գլխավոր խնդիրն այն է, որ շատ հաճախ պայքարը կենտրոնանում է հետեւանքների, ոչ թե պատճառների վերացման վրա:

Իմ համոզմամբ, այս անօրինական զարգացումները կանխելու հիմնական ճանապարհը իշխանափոխությունն է:

Հետընտրական իրավիճակը բոլորովին նոր քաղաքական իրողություն է ստեղծել: Եթե վեց ամիս առաջ քաղաքական ուժերը հիմնական սպասումները կապում էին ընտրությունների հետ, ապա այսօր արդեն անհրաժեշտ է վերագնահատել ամբողջ իրավիճակը:

Այսօրվա խորհրդարանի կազմը, ՔՊ-ի վերարտադրված մեծամասնությունն ու ստեղծված պայմանները պարտադրում են, որ ընդդիմությունն այլեւս նույն մեթոդներով չգործի: Պետք է հստակ գնահատել իրավիճակի լրջությունը, հասկանալ, թե ինչ հարթակներում եւ ինչ գործիքակազմով է հնարավոր արդյունավետ պայքար կազմակերպել:

Եթե այդ փոփոխությունները չկատարվեն, նման դեպքերը շարունակվելու են, մարդիկ շարունակելու են հայտնվել անազատության մեջ, իսկ երկիրը շարունակելու է շարժվել նույն վտանգավոր ուղղությամբ:

- Եթե, ինչպես ասում եք, կան քաղաքական հետապնդումներ եւ ապօրինի կալանքներ, ապա ինչո՞ւ չկա լայն քաղաքական շարժում:

- Մի բան հստակ է. միայն խորհրդարանի միջոցով հնարավոր չէ լուծել ո՛չ իշխանափոխության, ո՛չ էլ իրական քաղաքական դիմադրության խնդիրը:

Խորհրդարանական եւ արտախորհրդարանական պայքարը պետք է լինեն փոխլրացնող եւ ներդաշնակեցված: Անկախ այն հանգամանքից, որ տարբեր քաղաքական ուժեր կարող են տարբեր հարցերի շուրջ տարբեր մոտեցումներ ունենալ, կան ռազմավարական ուղղություններ, որոնց շուրջ անհրաժեշտ է ձեւավորել միասնական դիրքորոշում:

- Որպես արտախորհրդարանական ուժ՝ պատրաստվո՞ւմ եք սեփական օրակարգով դուրս գալ նաեւ փողոցային պայքարի:

- Չեմ կարծում, թե խորհրդարանում ներկայացված լինելը կամ չլինելը որեւէ սահմանափակում է ստեղծում խորհրդարանից դուրս ակտիվ գործելու համար: Հիշեցնեմ, որ 2021-2026 թվականներին բոլոր խոշոր փողոցային շարժումների ընթացքում Հանրապետական կուսակցությունը եղել է առաջին շարքերում: Սակայն գլխավոր հարցն այն չէ, թե ով խորհրդարանում է, ով՝ ոչ: Կարեւորն այն է, թե ինչ ընդհանուր օրակարգով են գործում քաղաքական ուժերը:

Այսօր բոլորն ունեն գրեթե նույն հռետորաբանությունը եւ նույն քննադատության թիրախը, սակայն միասնական գործողությունների, համակարգված նախաձեռնությունների եւ կազմակերպված պայքարի մասով մենք դեռ լուրջ խնդիրներ ունենք: Հենց դրա հետեւանքով էլ 2020 թվականից հետո անընդհատ խոսում ենք նոր քաղաքական հետապնդումների, նոր ձերբակալությունների ու քաղբանտարկյալների մասին, այլ ոչ թե այն հիմնական խնդրի լուծման, որի ուղղությամբ պետք է աշխատեինք:

- Իշխանությունը հայտարարում է, որ այդ գործերը վերաբերում են կոնկրետ անձանց, սակայն քաղաքացիները նշում են, որ դրա հետեւանքները կրում են նաեւ իրենց վրա՝ կորցնելով աշխատանքը կամ բախվելով այլ խնդիրների: Ի՞նչ կասեք այդ մարդկանց:

- Այս իշխանության համար մարդկային կապիտալը երբեք առաջնային արժեք չի եղել: Նրանց համար գոյություն ունի մեկ նպատակ, եւ այդ նպատակին հասնելու համար կիրառվում են անգամ ամենաանընդունելի, ամենաանբարոյական եւ ամենաապօրինի մեթոդները: Իշխանությանը չի հետաքրքրում՝ մարդն աշխատո՞ւմ է, ընտանիք պահո՞ւմ է, հարկեր վճարո՞ւմ է, թե ոչ: Տարիների ընթացքում իշխանությունն ապացուցել է, որ իր հիմնական նպատակը հնարավորինս երկար իշխանության մնալն է, եւ այդ նպատակին հասնելու համար պատրաստ է կիրառել ցանկացած միջոց:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՈՎՔԵՐ ԵՆ ԸՆՏՐՎԵԼ

Երեկ կայացած ՔՊ փակ նիստում ընտրվեցին ԱԺ մշտական հանձնաժողովների նախագահների թեկնածուները:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ՝

աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի թեկնածու է ընտրվել Նազելի Բաղդասարյանը,

կրթության, գիտության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողով՝ Սիսակ Գաբրիելյանը,

առողջապահության հարցերի մշտական հանձնաժողով՝ Լուսինե Բադալյանը,

արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով՝ Սարգիս Խանդանյանը,

տնտեսական հարցերի հանձնաժողով՝ Բաբկեն Թունյանը,

պետական իրավական հարցերի մշտական հանձնաժողով՝ Արուսյակ Ջուլհակյանը,

տարածաշրջանային եւ Եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով՝ Տրդատ Սարգսյանը,

ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով՝ Ծովինար Վարդանյանը,

տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողով՝ Վահե Ղալումյանը,

մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողով՝ Զարուհի Բաթոյանը,

եվրաինտեգրման մշտական հանձնաժողով՝ Սոնա Ղազարյանը,

պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով՝ Վիլեն Գաբրիելյանը:

ՔՊ վարչության նիստից հետո՝ ճեպազրույցում Փաշինյանը հայտնեց, որ վարչապետի աշխատակազմի ղեկավար կնշանակվի Լիլիթ Մակունցը:

Պաշտպանության եւ ՆԳ նախարարները վերանշանակվելու են: Արփինե Սարգսյանն ու Սուրեն Պապիկյանը կշարունակեն պաշտոնավարել:

Ո՞Վ Է ՕՐՀՆԵԼՈՒ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ օգոստոսի 2-ին Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի 9-րդ գումարման անդրանիկ նիստին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի փոխարեն օրհնության կարգը կատարելու է կարգալույծ հռչակված քահանա Արամայիս Թախմազյանը (նախկինում՝ Տեր Թադե քահանա Թախմազյան): ArmLur.am-ի հետ զրույցում նախկին քահանան ո՛չ հաստատեց, ո՛չ հերքեց տեղեկությունը: «Բոլոր հարցերով դիմե՛ք Ազգային Ժողովին»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Արամայիս Թախմազյանը: Վերջինս նաեւ հրաժարվեց պատասխանել՝ ինքը Ազգային Ժողովից նման հրավեր ստացե՞լ է, թե՞ ոչ:

Տեղեկացնենք, որ առ այսօր Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն ՀՀ Ազգային Ժողովի կողմից հրավեր չի ստացել՝ ԱԺ-ի 9-րդ գումարման անդրանիկ նիստին ելույթ ունենալու եւ հայրապետական աղոթք հնչեցնելու համար:

Ն. Ա.

ՏՈՒԳԱՆԵԼ ԵՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը 3 տարբեր որոշումներով՝ 600 հազար դրամի չափով վարչական տույժի է ենթարկել «Ուժը Հայրենյաց» կուսակցության ղեկավար մարմնի անդամ Տիգրան Արզաքանցյանին: Այս մասին տեղեկանում ենք Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից: Պատճառն այն է, որ Արզաքանցյանը չի ներկայացրել կուսակցության ղեկավար մարմնի անդամ դառնալու օրվա դրությամբ, ինչպես նաեւ 2023 եւ 2024 թվականների՝ գույքի եւ եկամուտների հայտարարագիրը: ԿԿՀ-ի որոշմամբ՝ նրա նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ 200 հազարական դրամ չափով:Նշվում է, որ Արզաքանցյանը ծանուցվել է, սակայն այդպես էլ չի ներկայացրել հայտարարագրերը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունում տեղի է ունեցել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 100 % բաժնետոմսերի (բաժնեմասի) նկատմամբ հանրային գերակա շահ ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հանրային լսումը: Այս մասին հայտնում են ՀՀ ՏԿԵ նախարարությունից: Հանրային լսումը վարում էր ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը:

Հանրային լսմանը մասնակցել են ՀԷՑ ժամանակավոր կառավարիչ Ռոմանոս Պետրոսյանը, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ Սերգեյ Աղինյանը, էներգետիկ համակարգի ընկերությունների ղեկավարներ ու ներկայացուցիչներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ, քաղաքացիներ: Նախարար Խուդաթյանը ներկայացրել է նախագծի բովանդակությունը: Մասնավորապես ընդգծել է, որ հանրային գերակա շահ ճանաչելու նախագծի հիմքում դրվել է էլեկտրաէներգիայի բաշխման կենսական հանրային նշանակության, բնակչությանը անխափան էնեկտրաէներգիայի մատակարարման, սոցիալական եւ ռազմավարական օբյեկտների բնականոն գործունեության, էներգետիկ համակարգի կայունության եւ սպառողների իրավունքների պաշտպանության կարեւորությունը:

Մասնակիցների կողմից նախագծի վերաբերյալ առաջարկություններ եւ դիտողություններ չեն ներկայացվել:

ՀՈՒՅՍ ՈՒՆԻ

ՄԱԿ-ը հույս ունի, որ ԱՄՆ-ն եւ Իրանը կօգտվեն ռազմական գործողությունների դադարեցումից՝ իրենց տարաձայնությունները լուծելու դիվանագիտական ջանքերն ակտիվացնելու համար: Այս մասին ճեպազրույցի ժամանակ հայտարարել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի մամուլի խոսնակի տեղակալ Ֆարհան Հաքը:

«Մենք, անշուշտ, հույս ունենք, որ կողմերը ռազմական գործողությունների դադարը կօգտագործեն որպես հնարավորություն՝ ակտիվացնելու իրենց դիվանագիտական ջանքերը եւ համագործակցելու միջնորդների հետ: Մենք խրախուսում ենք միջնորդներին, այդ թվում՝ Պակիստանին, Կատարին եւ այլոց, շարունակել իրենց աշխատանքը՝ կողմերին բանակցային սեղանի շուրջ վերադարձնելու համար»,-ասել է նա՝ պատասխանելով այս հարցի վերաբերյալ հարցին:

ԻՆՉ Է ՔՆՆԱՐԿԵԼ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտնել է, որ հուլիսի 28-ին Սպիտակ տանը Վլադիմիր Զելենսկու եւ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուի հետ հանդիպումների ժամանակ քննարկել է բազմաթիվ հարցեր: «Քննարկվել են բազմաթիվ հարցեր: Հանդիպումը շատ լավ է անցել», -գրել է ամերիկացի առաջնորդը Truth Social-ում՝ անդրադառնալով Զելենսկու հետ իր բանակցություններին: Նա որեւէ մանրամասնություն չի հայտնել:

«Դա շատ լավ հանդիպում էր: Անշուշտ, քննարկվել են շատ կարեւոր հարցեր», - նշել է Թրամփը՝ անդրադառնալով Նեթանյահուի հետ իր խորհրդակցություններին:

Սպիտակ տան մամուլի քարտուղար Քերոլայն Լիվիտը նախկինում հայտարարել էր, որ ամերիկյան կողմը երկու հանդիպումներն էլ համարել է դրական եւ արդյունավետ:

ՀԱԲՎԱԾՆԵՐ ԵՆ ՀԱՍՑՐԵԼ

Եմենի «Անսար Ալլահ» շարժման հութի ապստամբները նշել են, որ անօդաչու թռչող սարքերով հարված են հասցրել Սաուդյան Արաբիայի նավթի փոխադրման օբյեկտներին:

«Մի քանի անօդաչու թռչող սարքերով հարվածներ են հասցվել Սաուդյան Արաբիայի արեւելքից դեպի Յանբու նավահանգիստ տանող մի շարք զգայուն թիրախների եւ նավթի մատակարարման ու փոխադրման կետերի», - գրել է ապստամբների ռազմական խոսնակ Յահյա Սարիան իր Telegram ալիքում:

Սարիան նշել է, որ հարձակումը պատասխան է եղել «սաուդյան անօդաչու թռչող սարքերի կողմից Եմենի օդային տարածքի խախտմանը»:

Ավելի վաղ թագավորության պաշտպանության նախարարությունը հայտնել էր, որ հակաօդային պաշտպանության համակարգերը որսացել են Իրաքի տարածքից արձակված մի քանի անօդաչու թռչող սարքեր: Սաուդյան բանակի տվյալներով՝ անօդաչու թռչող սարքերը փորձել են հարձակվել Ալ-Շարքիա նահանգում եւ Ռիադում գտնվող նավթային օբյեկտների վրա:

ԻՆՉ ՈՒՆԻ

ՔՊ-ՈՒՄ ՎԻԼԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներսում նոր քաղաքական վերադասավորումներ են հասունանում: Երեկ ՔՊ վարչությունը պետք է որոշեր, թե ով կլինի Ազգային Ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածուն: Պայքարի հիմնական մասնակիցներն էին Վիլեն Գաբրիելյանը, Արմեն Խաչատրյանը եւ Սասուն Միքայելյանը, մինչդեռ գործող նախագահ Անդրանիկ Քոչարյանը չէր դիտարկվում այդ պաշտոնում եւ կարող է շարունակել գործունեությունը միայն որպես շարքային պատգամավոր:

Այս ֆոնին առավել ուշագրավ է Վիլեն Գաբրիելյանի անունը. մի գործիչ, որը մի քանի տարի առաջ հրապարակային սկանդալի պատճառով հրաժարվեց պատգամավորական մանդատից, սակայն այսօր կրկին հայտնվել է ՔՊ-ի ամենազգայուն ուղղություններից մեկի՝ պաշտպանության եւ անվտանգության ոլորտի ղեկավար պաշտոնի հավակնորդների շարքում:

«Նավակ ճոճողից»՝ իշխանական վերնախավի թեկնածու

Հանրությանը «Նավակ ճոճողը» մականունով հայտնի Վիլեն Գաբրիելյանը քաղաքականություն է մտել քաղաքացիական ակտիվիզմից: Նրա կենսագրության ամենահնչեղ դրվագներից մեկը 2015 թվականի դեպքն էր, երբ Երեւանի կենտրոնում 3-4 դիմակավորված անձինք փայտերով եւ բռունցքներով հարձակվել էին նրա վրա: Գաբրիելյանը տեղափոխվել էր թիվ 1 համալսարանական հիվանդանոց՝ գլխի պատռվածքներով եւ դեմքի վնասվածքներով, իսկ միջադեպի մասին ոստիկանությանը տեղեկացրել էր նրա ընկեր Հակոբ Սիմիդյանը:

2018 թվականի հեղափոխությունից հետո, երբ նա ավարտեց ծառայությունը Քարվաճառում, մամուլում ակտիվորեն շրջանառվում էին լուրեր, թե Գաբրիելյանը կարող է նշանակվել բարձր պաշտոնների, այդ թվում՝ ՀՀ ոստիկանապետ: 2020 թվականի հունվարին նա նշանակվեց «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի եւ բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ տնօրեն:

Հետագայում «Ժողովուրդ» օրաթերթին տված հարցազրույցում նա չէր թաքցրել, որ իրեն ավելի շատ պատկերացնում էր ոստիկանական համակարգի ղեկավարի պաշտոնում եւ ունի սեփական պատկերացումները «ՀՀ ոստիկանի կերպարի» մասին:

Գյումրիի սկանդալը եւ մանդատի հրաժարականը

Վիլեն Գաբրիելյանի քաղաքական կարիերայի ամենասկանդալային դրվագը տեղի ունեցավ 2025 թվականին Գյումրիում՝ ընտրության օրը: Տարածված տեսանյութերում նա երեւում էր ոչ սթափ վիճակում՝ լրագրողների հասցեին սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնելիս եւ վիճաբանության մեջ մտնելիս ոչ միայն լրագրողների, այլեւ սեփական թիմակիցների հետ:

Միջադեպից հետո Գաբրիելյանը հրապարակային ներողություն խնդրեց՝ հայտարարելով, որ իր վարքագիծը «վայել չէ պատգամավորին», եւ վայր դրեց պատգամավորական մանդատը: ՔՊ ընտրացուցակով նրան փոխարինեց Արշակ Օրդուխանյանը:

Այդ ժամանակ նա հայտարարում էր, որ կենտրոնանալու է «Գարդման-Շիրվան-Նախիջեւան» համահայկական միության գործունեության վրա: Սակայն քաղաքականությունից հեռանալը կարճ տեւեց: Նա ինքնառաջադրվեց ՔՊ վարչության ընտրություններում՝ հայտարարելով, որ կուսակցությունն ունի «լրջագույն առողջացման կարիք», եւ արդյունքում ընտրվեց վարչության անդամ:

Այս հանգամանքը ցույց է տալիս, որ նույնիսկ աղմկահարույց սկանդալից հետո ՔՊ ներսում Գաբրիելյանը չի կորցրել ազդեցությունը եւ շարունակում է ունենալ քաղաքական հենարան:

Ինչ ունեցվածքով է պաշտոնների հավակնում Գաբրիելյանը

«Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Վիլեն Գաբրիելյանի հայտարարագրված եկամուտները վերջին տարիներին զգալի փոփոխություններ են կրել:

2021 թվական

Պաշտոնը ստանձնելու պահին նա հայտարարագրել էր Արագածոտնի մարզի Նոր Եդեսիա համայնքում գտնվող մեկ հողամաս եւ երկու հին ավտոմեքենա՝ 1988 թվականի IZH բեռնատար եւ 1999 թվականի MITSUBISHI մարդատար մեքենա: Բանկային հաշվում ունեցել էր ընդամենը 200 հազար դրամ, իսկ ընդհանուր եկամուտը կազմել էր 8 մլն 110 հազար 602 դրամ:

2022 թվական

Այս տարի նրա գույքային դրությունը փոխվեց. նա 22 մլն 600 հազար դրամով ձեռք բերեց Երեւանի բնակարանի 1/3 բաժնեմասը: Բնակարանի գնումը ֆինանսավորվեց վարկային միջոցներով, եւ տարեվերջին նրա վարկային պարտավորությունները հասան 11.4 մլն դրամի:

2023 թվական

Գաբրիելյանի հայտարարագրած ընդհանուր եկամուտը կտրուկ աճեց՝ կազմելով 18 մլն 846 հազար 860 դրամ, սակայն այդ գումարի զգալի մասը բանկերից ստացված վարկերն էին: Տարեվերջին նրա ընդհանուր վարկային պարտավորությունները հասել էին 21.5 մլն դրամի:

2024 թվական

Պատգամավորական աշխատավարձը գերազանցեց 10 մլն դրամը, իսկ ընդհանուր եկամուտը կազմեց 15.1 մլն դրամ: Միեւնույն ժամանակ վարկային բեռը շարունակեց աճել եւ տարեվերջին հասավ 25 մլն 97 հազար դրամի:

2025 թվական

Ամենահետաքրքիր փոփոխությունը տեղի ունեցավ 2025 թվականին: Այդ ժամանակ Գաբրիելյանը արդեն ՔՊ վարչության անդամ էր, սակայն նրա հիմնական եկամուտը այլեւս Ազգային Ժողովից չէր: Հայտարարագրի համաձայն՝

8 մլն 786 հազար դրամ ստացել է «Գարդման-Շիրվան-Նախիջեւան» համահայկական միությունից,

3 մլն 437 հազար դրամ՝ Ազգային Ժողովի աշխատակազմից,

մլն դրամ՝ որպես բանկային վարկ:

Ընդհանուր եկամուտը կազմել է 13 մլն 223 հազար 749 դրամ:

Այսպիսով, 2021 թվականի համեմատ նրա տարեկան եկամուտներն աճել են մոտ 5.1 մլն դրամով, սակայն միաժամանակ պահպանվել է զգալի վարկային ծանրաբեռնվածությունը՝ 23.6 մլն դրամ:

Հին մեքենաներ, փոքր հաշիվներ, մեծ քաղաքական հավակնություններ

Հատկանշական է, որ տարիների ընթացքում Գաբրիելյանի գույքային պատկերը գրեթե չի փոխվել: Նա շարունակում է հայտարարագրել նույն 1988 թվականի IZH-ը եւ 1999 թվականի MITSUBISHI-ն, չունի արժեթղթեր, ներդրումներ, ավանդներ կամ կրիպտոարժույթ, իսկ բանկային հաշիվների մնացորդը 2025-ի վերջում կազմել է ընդամենը 303 հազար դրամ:

Այս ֆոնին հատկապես ուշագրավ է, որ իշխանական կուսակցությունը պաշտպանության եւ անվտանգության հանձնաժողովի ղեկավարի պաշտոնի համար քննարկում է մի գործչի, որը՝

սկանդալային միջադեպից հետո հրաժարվել էր մանդատից,

ունի բազմամիլիոնանոց վարկային պարտավորություններ,

վերջին շրջանում հիմնականում աշխատավարձ է ստանում ոչ թե պետական համակարգից, այլ հասարակական կազմակերպությունից:

ՔՊ-ի ներքին ընտրությունը՝ քաղաքական ուղերձ

Երեկվա նիստում ՔՊ վարչությունը վերջնականապես կանգնեց Վիլեն Գաբրիելյանի թեկնածության վրա: Սա ոչ միայն կադրային որոշում է, այլեւ քաղաքական ուղերձ կուսակցության ներսում: Իշխանությունը փաստացի ցույց տվեց, որ Գյումրիի սկանդալը, մանդատի հրաժարականը եւ հրապարակային ներողությունը չեն խոչընդոտում նրան վերադառնալու ՔՊ-ի ուժային եւ անվտանգության ուղղության ամենակարեւոր պաշտոններից մեկի հավակնորդների շարքը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԵՊՔԻ ՎԱՅՐՈՒՄ

ԻՆՉ ԷՐ ԱՆՈՒՄ ԳՆԴԱՊԵՏԸ

Հուլիսի 18-ին Էրեբունիում 30-ից ավել կրակոցների գործով կալանավորված է 5 անձ: Այս մասին ArmLur.am-ին պաշտոնապես հայտնեցին ՀՀ քննչական կոմիտեից:

ArmLur.am-ը հայտնել էր, որ կալանավորվածների մեջ է ՃՈ նախկին պետ, ոստիկանության գնդապետ Արմեն Հակոբյանի մորաքրոջ որդին՝ Գուրգեն Սիրունյանը: Վերջինիս կալանավորել են քրեական ենթամշակույթին հարելու վարույթի շրջանակներում, որը կցվել է Էրեբունու կրակոցների դեպքին եւ քննվում էր նույն վարույթի շրջանակներում: Ուշագրավն այն է, որ աղմկահարույց կրակոցներից մի քանի օր անց մեր նկարահանող խումբը անձամբ նկատել է ոստիկանության գնդապետ Արմեն Հակոբյանին դեպքի վայրում ուսումնասիրություն կատարելիս:

Հավելենք, որ Արմեն Հակոբյանը վերոնշյալ տարածքում է ապրում: Անգամ հարցրեցինք, թե ինչու է այդտեղ գտնվում, սակայն վերջինս չցանկացավ խոսել: Ավելի ուշ պարզվեց, որ կալանավորվել է մորաքրոջ որդին՝ Գուրգեն Սիրունյանը: Ըստ քննչական կոմիտեի՝ կատարված լայնածավալ քննչական եւ վարութային գործողությունների, ինչպես նաեւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված փաստերի հիման վրա Ա.Օ.-ի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ եւ 8-րդ կետերով եւ 335-րդ հոդվածի 2-րդ մասով (մի խումբ անձանց կողմից, այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության փորձ եւ ապօրինի կերպով հրազեն ձեռք բերելը, պահելը եւ կրելը), Վ.Գ.-ի, Ա.Մ.-ի եւ Ս.Մ.-ի նկատմամբ՝ 155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ եւ 8-րդ կետերով, 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ եւ 8-րդ կետերով (4 դրվագ) եւ 335-րդ հոդվածի 2-րդ մասով (մի խումբ անձանց կողմից, այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով սպանություն, նույն եղանակով սպանության փորձ եւ ապօրինի կերպով հրազեն ձեռք բերելը, պահելը եւ կրելը), Գ.Ս.-ի նկատմամբ 322-րդ հոդվածի 1-ին մասով (քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ստանալը եւ պահպանելը): Ա.Օ.-ն կալանավորվել է: Վ.Գ.-ի, Ա.Մ.-ի, Գ.Ս.-ի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություններ է ներկայացվել դատարան:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում իրականացված քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Հ.Մ.-ն իր քրոջ ամուսին Հ.Ս.-ի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, օգտագործելով անասնապահներ՝ անչափահաս Ա.Պ.-ի եւ նրա հայր Յ.Պ.-ի՝ իրենց մոտ 40-60 հզր ՀՀ դրամ պարտք լինելու, ինչպես նաեւ անչափահասի հոգեկան ակնհայտ հիվանդություն ունենալու հանգամանքները, 2025 թվականի օգոստոսի 8-ից մինչեւ սեպտեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում թրաֆիքինգի՝ հարկադիր աշխատանքի են ենթարկել Ա.Պ.-ին, ինչն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանք՝ նրան պատճառելով հոգեբանորեն ծանր եւ հուզականորեն արտահայտված տառապանք:

Քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում բացահայտվել են հանցանք կատարած անձինք եւ որոշումներ են կայացվել նրանց նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ՝ Քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգը կամ շահագործումը): Նրանցից մեկի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է տնային կալանքը, մյուսի նկատմամբ՝ բացակայելու արգելքը: Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՐԾՈՂ ՀՐԱՁԳԱՐԱՆ

ՆԳՆ քրեական ոստիկանության Կոտայքի մարզային վարչության եւ Համայնքային ոստիկանության Նաիրիի բաժնի ծառայողները համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերել, որ Եղվարդ քաղաքի 51-ամյա բնակիչը զբաղվում է ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ՝ առանց համապատասխան թույլտվության կազմակերպում է հրաձգության պարապմունքներ՝ այցելուներին տրամադրելով հրաձգարանի տարածքում պահվող ապօրինի զենք-զինամթերք:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված խուզարկությամբ Եղվարդ քաղաքում ապօրինի գործող հրաձգարանի տարածքում հայտնաբերվել են 3 ինքնաձիգ, որսորդական 3 հրացան, լիցքավորված ատրճանակ, տարբեր տեսակի եւ տրամաչափի 2210 փամփուշտ, հակահետեւակային եւ հակատանկային ականներ, մարտական գլխիկներով ականանետեր, ականանետի արկեր, 15 նռնակ, նռնակի պայթուցիչներ, փամփշտատուփեր, որոնցից մի քանիսը՝ լիցքավորված եւ տարբեր տեսակի այլ զինամթերք: Եղվարդ քաղաքի 51-ամյա բնակիչն ու հրաձգարանի աշխատակիցը ձերբակալվել են:

Ապօրինի պահվող զենք-զինամթերքի հայտնաբերման ու առգրավման ծավալուն միջոցառումները շարունակվում են:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԲՌՆԱԳԱՆՁԵԼ

ՀՀ ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանից եւ նրան փոխկապակցված անձանցից Գլխավոր դատախազությունը պահանջում է բռնագանձել.

193 անշարժ գույք, որն ի թիվս այլնի ներառում է 46 բնակարան Կենտրոն վարչական շրջանում, 89 անշարժ գույք Կոտայքի մարզում, 29 իրավաբանական անձում մասնակցություն, որոնց թվում են «ՄԵԳԱՍՊՈՐՏ» ՍՊԸ-ն, «ՄԵԳԱ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն, 14 շարժական գույք, 1.451.074 ԱՄՆ դոլարի չափով ձեռքբերված պարտատոմսեր, 147.210 ԱՄՆ դոլար ավանդ,23.081.354 ԱՄՆ դոլարի, 409.806.800 ՀՀ դրամի եւ 9.750 եվրոյի չափով փոխառության պահանջի իրավունք, 17.761.537.781 դրամ:

«ՀՈՒՇԱՆՎԵՐ» ԹՂԹԱԴՐԱՄՈՎ

Հուլիսի 24-ին Համայնքային ոստիկանության Մաշտոցի բաժին խարդախության վերաբերյալ նույնատիպ երկու հաղորդում էր ստացվել: Արագածոտնի մարզի Ոսկեհատ գյուղի բնակչուհին հայտնել էր, որ Երեւանի Շիրազի փողոցում անհայտ անձը իրենից գնած 3000 դրամ արժողությամբ մրգի համար վճարել է «հուշանվեր» գրառմամբ քսանհազարանոց՝ ստանալով 17 հազար դրամ մանրը: Նույն փողոցում միրգ վաճառող Արագածոտնի մարզի Շենավան գյուղի բնակչուհուց գնած հազար դրամ արժողությամբ մրգի համար նույնպես անհայտ անձը վճարել էր 20 հազար «հուշանվեր» թղթադրամով:

Մաշտոցի բաժնի համայնքային ոստիկանները օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են, որ խարդախության երկու դեպքն էլ կատարել է Երեւանի բնակիչ 41-ամյա տղամարդը: Նա հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է բաժին, որտեղ բացատրական աշխատանքի արդյունքում խոստովանել է արարքը:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

ՊՆ–Ն ՀԵՐՔՈՒՄ Է

ՀՀ ՊՆ-ն հերքում է սոցցանցերում տարածված՝զինծառայողի ծեծի ենթարկվելու մասին լուրերը.

««Ֆեյսբուք» սոցիալական ցանցում օգտատերերից մեկը տարածել է իրականությանը չհամապատասխանող տեղեկություն:

Հորդորում ենք զերծ մնալ կեղծ եւ սուտ տեղեկություններ տարածելուց, ինչպես նաեւ հասարակության շրջանում ՀՀ բանակի հեղինակությունը վարկաբեկելուն ուղղված անհիմն փորձերից:

Նման հրապարակումները մոլորեցնում են հանրությանը՝ նպաստելով ապատեղեկատվության տարածմանը:

Զինծառայող Ա. Հ.-ի դաժան ծեծի կամ առհասարակ ծեծի ենթարկվելու վերաբերյալ տեղեկությունները սուտ են. նա զինվորական հոսպիտալ է ընդունվել այլ առողջական խնդրով:

Պաշտպանության նախարարությունը պատրաստ է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներին ուղեկցել հոսպիտալ՝ տեղում իրականությանը ծանոթանալու նպատակով»:

ՀԱՅՑԸ ԲԱՎԱՐԱՐՎԵԼ Է

Գլխավոր դատախազությունը պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ Ճամբարակ համայնքի՝ 0.02 հա մակերեսով հողամասի վերաբերյալ աճուրդն անվավեր ճանաչելու եւ անվավերության հետեւանքներ կիրառելու պահանջներով:

Հակակոռուպցիոն դատարանի՝ 2026 թվականի հուլիսի 21-ի վճռով՝ Գլխավոր դատախազության հայցը բավարարվել է:

Վճռով անվավեր է ճանաչվել Ճամբարակ համայնքի կողմից իրականացված աճուրդը եւ որպես աճուրդի անվավերության հետեւանք՝ անվավեր են ճանաչվել Ճամբարակ համայնքի եւ ֆիզիկական անձի միջեւ 2013 թվականի մայիսի 31-ին կնքված հողամասի առուվաճառքի մասին պայմանագիրն ու պայմանագրի հիման վրա կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, Ճամբարակ համայնքին կվերադարձվի 0.02 հա մակերեսով հողամասը:

● *Հուլիսի 20-ից 27-ը մայրաքաղաքում պարեկները հայտնաբերել են վարելու ընթացքում ծխելու 581 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏԵԼՈՒ Է

Մայիսի 30-ին Ոսկեպար գյուղում նախընտրական հանդիպման ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանը գյուղի հրապարակում հավաքված ոսկեպարցիներին ասաց, որ ամենակարեւոր գործերից մեկը համարում է սահմանազատման գործընթացը ավարտին հասցնելը, որպեսզի ոսկեպարցի երեխաների համար կիսատ գործ չթողնեն: Սահմանազատման շարունակության դեպքում Ադրբեջանին կհանձնվեն ոչ միայն Վերին Ոսկեպարի տարածքը, այլ նաեւ միջպետական ավտոճանապարհի Կիրանց-Ոսկեպար հատվածի որոշ տեղեր: Դրանից հետո Տավուշի մարզկենտրոն Իջեւանի տրանսպորտային կապը Նոյեմբերյան համայնքի հետ կդժվարանա: Իջեւան-Նոյեմբերյան ճանապարհին այլընտրանքային ճանապարհ է Ենոքավան-Կարմիրգյուղ-Ջուջեւան ավտոճանապարհը, որի 6,3 կիլոմետր հատվածը կառուցվել է 2024 թվականին, ճանապարհի մնացած, մեծ հատվածը պետք է կառուցապատվի: Հունիսի 22-ին այդ ճանապարհի շարունակության կառուցման մասին հարցում եմ ուղարկել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին: Հունիսի 29-ին ստացել եմ ՏԿԵ նախարարի տեղակալ Ավետիք Դարբինյանի ստորագրությամբ պատասխան. «Հայտնում ենք, որ Հ26, /Մ4/-Ենոքավան-Կարմիրգյուղ(գյուղատեղի)- /Մ16/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 6+300-կմ 71+800 հատվածի հիմնանորոգման նախագիծը պատրաստ է: Շինարարության մրցույթը կայացել է: Մոտ 67 կմ ավտոճանապահի հիմնանորոգման աշխատանքները մեկնարկել են: Շինաշխատանքերի պայմանագրային արժեքը 14 670 000 000 դրամ է»: Ամեն փոքր գործից քարոզչական մեծ աղմուկ բարձրացնող իշխանությունը 67 կիլոմետր երկարությամբ, 14 միլիարդ 670 միլիոն դրամ արժեքով ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների մասին հանրությանը չի տեղեկացրել: Դրա պատճառն այն է, որ հանրությունը, իմանալով Իջեւան-Նոյեմբերյան ճանապարհին այլընտրանք հանդիսացող Ենոքավան-Կարմիրգյուղ-Ջուջեւան ավտոճանապարհի հիմնանորոգման մասին, կանհանգստանա, որ առաջիկայում սահմանազատման շարունակությունով Ադրբեջանին են հանձնվելու նախկինում ադրբեջանական անկլավ Վերին Ոսկեպարը, Կիրանց-Ոսկեպար ճանապարհի հատվածներ: Հուլիսի 15-ին ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանին նոր հարցում եմ արել. «Ենոքավան-Կարմիրգյուղ-հանրապետական նշանակության Մ16 ավտոճանապարհ, ընդհանուր 67 կմ ավտոճանապարհի հիմնանորոգումը ո՞ր կազմակերպությունն է իրականացնում, ե՞րբ է նախատեսված աշխատանքների ավարտը»: ՏԿԵ նախարարությունից պատասխանել են. «Հայտնում ենք, որ Հ26, /Մ4/-Ենոքավան-Կարմիրգյուղ (գյուղատեղի)-/Մ16/ հանրապետական նշանակության ավտոճանապահի կմ 6+300+կմ 71+800 հատվածը հիմնանորոգում է «ԱԱԲ Պրոյեկտ» ՍՊԸ-ն: Շինաշխատանքները կտեւեն մոտ 3 տարի»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԿԱՆԴԱԼՆԵՐՈՎ ՀԱՅՏՆԻ

ԹԱՂԱՊԵՏԻՑ՝ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նորընտիր պատգամավորներից է Ռոման Համբարձումյանը, որի անունը հանրությանը առավել հայտնի դարձավ ոչ թե օրենսդիր նախաձեռնություններով, այլ Դավիթաշեն վարչական շրջանի ղեկավարի պաշտոնում աշխատելու ընթացքում ձեւավորված սկանդալային համբավով:

Կարճ պաշտոնավարում, երկար քննադատություններ

Ռոման Համբարձումյանը Դավիթաշենի վարչական շրջանի ղեկավար նշանակվեց 2022 թվականի մարտին: Մինչ այդ նա ղեկավարել էր «Կիլիկիա» ավտոկայանը, աշխատել «ՀայՓոստ»-ում, «Վեոլիա Ջուր» ընկերությունում եւ այլ կազմակերպություններում: Սակայն ընդամենը երկու տարի անց՝2024 թվականին, նա հեռացավ թաղապետի պաշտոնից: Դավիթաշենի բնակիչների շրջանում նրա գործունեությունը բազմիցս դարձել է դժգոհությունների առարկա: Բնակիչները հրապարակայնորեն քննադատում էին աղբահանության կազմակերպումը, բարեկարգման աշխատանքների որակը, ինչպես նաեւ վարչական շրջանի ղեկավարության վերաբերմունքը քաղաքացիների նկատմամբ:

«Փողոցային կանոններ» եւ կրակոցներով ավարտված պատմություն

Համբարձումյանի պաշտոնավարման ամենաաղմկահարույց դրվագներից մեկը կապված էր նրա տեղակալ Կորյուն Մխիթարյանի անվան հետ: 2023 թվականին վերջինիս վրա կրակեցին, եւ մամուլում շրջանառվող տեղեկությունների համաձայն՝ միջադեպը կապվում էր ոչ թե անձնական հարաբերությունների, այլ նրա պաշտոնեական գործունեության եւ քաղաքացիների հետ կոշտ ու «փողոցային» հարաբերությունների հետ:

Թեեւ իրավապահ մարմինները հրապարակայնորեն չեն հաստատել այդ մեկնաբանությունները, փաստն այն է, որ միջադեպը լուրջ հարված հասցրեց Դավիթաշենի վարչական ղեկավարության հեղինակությանը եւ նոր հարցեր առաջացրեց այն մթնոլորտի վերաբերյալ, որը ձեւավորվել էր թաղապետարանում:

30 հազար դոլարի ավանդ եւ 15 հազար դոլարի ժամացույց

«Ժողովուրդ» օրաթերթը դեռեւս 2023 թվականին գրել էր, որ Ռոման Համբարձումյանը հայտարարագրել է բանկային ավանդ, որը տարեվերջի դրությամբ կազմել է 30 հազար ԱՄՆ դոլար:

Ավելի ուշ հայտնի դարձավ եւս մեկ ուշագրավ հանգամանք. ըստ հայտարարագրի՝նա դեռեւս 2017 թվականին նվեր է ստացել 15 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ ձեռքի ժամացույց: Սակայն հայտարարագրում չի նշվել, թե ով է այդ նվիրատուն եւ ինչ առիթով է կատարվել նման թանկարժեք նվերը:

Այս հանգամանքը ինքնին իրավական խախտում չի ապացուցում, սակայն հանրային պաշտոն զբաղեցնող անձի դեպքում նման թանկարժեք նվերի ծագման եւ հիմնավորման հարցերը բնականաբար առաջացնում են հանրային հետաքրքրություն:

«Սրբազան պայքարի» օրերին՝ կոչ ճնշումների՞

Ռոման Համբարձումյանի անունը կրկին ակտիվորեն շրջանառվեց «Սրբազան պայքարի» շարժման ընթացքում: Նա ֆեյսբուքյան իր էջում գրել էր.

«Հավաքեք այդ մարդկանց տվյալները, նկարները... փաստերը, որոնք ունեն աշխատողներ կամ աշխատում են պետական համակարգում եւ իրենց աշխատողներին բերում են այս հավաքներին»:

Այս գրառումը լայն քննադատության արժանացավ, քանի որ այն ընկալվեց որպես անհնազանդության ակցիաների մասնակիցների նկատմամբ վերահսկողություն եւ հնարավոր ճնշումներ կազմակերպելու կոչ: Իշխանության ներկայացուցիչների կողմից նման հրապարակումները հատկապես զգայուն են դիտարկվում խոսքի ազատության եւ քաղաքական մասնակցության իրավունքների համատեքստում:

Կրթության մասին տեղեկություններ չկան

Հատկանշական է նաեւ, որ հանրային տիրույթում գրեթե բացակայում են տեղեկություններ Ռոման Համբարձումյանի կրթության վերաբերյալ: Նրա կենսագրական տվյալներում նշվում են տարբեր աշխատանքային փորձեր, սակայն չի հրապարակվում, թե որ բուհում է սովորել կամ ինչ մասնագիտական կրթություն ունի այն մարդը, որն այժմ պատրաստվում է զբաղվել օրենսդրական գործունեությամբ:

ՔՊ-ի հերթական հակասական ընտրությունը

«Քաղաքացիական պայմանագիրը» վերջին տարիներին բազմիցս հայտարարել է, որ իր թիմը ձեւավորվում է նոր քաղաքական մշակույթի, հաշվետվողականության եւ հանրային վստահության սկզբունքներով: Սակայն Ռոման Համբարձումյանի առաջադրումը եւ ընտրվելը կրկին հարցականի տակ են դնում այդ հայտարարությունների բովանդակությունը:

Դավիթաշենում կարճ, բայց սկանդալներով ուղեկցված պաշտոնավարում, բնակիչների մշտական դժգոհություններ, աղմկահարույց միջադեպի ստվեր, չպարզաբանված թանկարժեք նվեր եւ քաղաքական ընդդիմախոսների նկատմամբ կոշտ հռետորաբանություն. այս ամբողջ ֆոնին Ռոման Համբարձումյանը ոչ թե «նոր Հայաստանի» օրինակելի կադրի, այլ իշխանության ներսում ձեւավորված հակասական եւ վիճահարույց նշանակումների հերթական դրսեւորումն է:

Այժմ մնում է հասկանալ՝Ազգային ժողովում նա կփորձի՞ փոխել իր քաղաքական դիմագիծը, թե Դավիթաշենից խորհրդարան տեղափոխվելու է նույն գործելաոճը, որի համար տարիներ շարունակ քննադատվում էր վարչական շրջանում:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՔԱԿՑԵԼ Է

ԱՄՆ Պետդեպարտամենտը աջակցում է Չադի կառավարության՝ Միջազգային քրեական դատարանից (ՄՔԴ) դուրս գալու որոշմանը եւ այն համարում է երկրի ինքնիշխանության ամրապնդմանն ուղղված քայլ, ասվում է ԱՄՆ Պետդեպարտամենտի հայտարարության մեջ: «Միացյալ Նահանգները ողջունում է Չադի՝Միջազգային քրեական դատարանից դուրս գալու որոշումը եւ միանում է այն երկրների աճող թվին, որոնք վերահաստատում են իրենց ինքնիշխանությունը՝ մերժելով այս թերի կազմակերպությունը», - ասվում է հայտարարության մեջ: Պետդեպարտամենտը ընդգծել է, որ Միացյալ Նահանգները կշարունակի ՄՔԴ-ի դեմ իր արշավը: Պետդեպարտամենտը նաեւ կոչ է արել մնացած պետություններին եւս դուրս գալ կազմակերպությունից: Երկուշաբթի օրը Չադի արտաքին գործերի նախարարությունը հայտարարեց երկրի՝ ՄՔԴ-ից դուրս գալու մասին: Արտաքին գործերի նախարարությունը որոշումը հիմնավորել է կազմակերպության կողմնակալությամբ: Հուլիսի 13-ին Պետդեպարտամենտը հայտարարել է, որ Միացյալ Նահանգները լայնածավալ արշավ է սկսում ՄՔԴ-ի դեմ, որը Վաշինգտոնը համարում է «ամերիկյան ինքնիշխանության սպառնալիք»:

ՀԱՊՈՐԴԵԼ Է

Իսրայելի եւ Լիբանանի ներկայացուցիչները օգոստոսի 4-6-ը Հռոմում կանցկացնեն բանակցությունների եւս մեկ փուլ: Այս մասին երկուշաբթի օրը հայտնել է Axios-ի եւ Իսրայելի հեռուստատեսության 12-րդ ալիքի թղթակից Բարակ Ռավիդը՝ հղում անելով Պետդեպարտամենտի պաշտոնյային: Հրապարակման համաձայն, այս երկրների, ինչպես նաեւ Միացյալ Նահանգների ներկայացուցիչները կքննարկեն «հարավային Լիբանանում իսրայելական զորքերի վերատեղակայման գործընթացի ընդլայնումը»: Ավելին, խորհրդակցությունները կքննարկեն Իսրայելի եւ Լիբանանի միջեւ «ցամաքային սահմանային վեճերը»: ԱՄՆ Պետդեպարտամենտի պաշտոնյայի խոսքով՝ Հռոմում տեխնիկական խորհրդակցությունները «կկենտրոնանան կողմերի միջեւ ստորագրված շրջանակային համաձայնագրի լիարժեք իրականացմանը նպաստելու վրա»: Սա ներառում է Լիբանանում «փորձնական գոտիներ» ստեղծելու «գործընթացի ընդլայնումը», որոնցից պետք է դուրս բերվեն իսրայելական զորքերը, «բոլոր սահմանային վեճերի լուծումը եւ համապարփակ խաղաղության եւ անվտանգության համաձայնագրի մշակումը»:

● *Հուլիսի 20-ից 27-ը մարզերում պարեկները հայտնաբերել են վարելու ընթացքում ծխելու 611 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ

Ֆասթ Բանկը ս.թ. հուլիսի 26-ից օգոստոսի 1-ը մասնակցում է Սեւան ստարտափ սամմիթ 2026-ին որպես ռազմավարական գործընկեր: Միջազգային բիզնես ֆորումը մեկ հարթակում համախմբել է ստարտափների հիմնադիրների, ներդրողների, տեխնոլոգիական ընկերությունների ներկայացուցիչների եւ նորարար գաղափարներ ունեցող երիտասարդների աշխարհի տարբեր երկրներից: Ֆասթ Բանկը միջազգային բիզնես ֆորումին ներկայացել է առանձին տաղավարով, որտեղ այցելուները հնարավորություն ունեն ծանոթանալ Բանկի նորարարական ֆինանսական լուծումներին, թվային պրոդուկտներին եւ քարտային առաջարկներին: Այս տարի եւս Բանկը սամմիթի մասնակիցների համար պատրաստել է հատուկ առաջարկներ. միջոցառման ողջ ընթացքում Visa Gold պրեմիում դասի ԱկնՔարտը հնարավոր է պատվիրել Ֆասթ Բանկի մոբայլ հավելվածով՝ ամբողջությամբ անվճար սպասարկմամբ: Իսկ իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի համար տաղավարում կներկայացվի Business Digital Mastercard ԱկնՔարտը, որը եւս հնարավոր է ձեռք բերել անվճար: Ֆասթ Բանկի տաղավարի այցելուներին սպասում են ինտերակտիվ խաղեր, նվերներ եւ անակնկալներ:

Հավելենք, որ Սեւան ստարտափ սամմիթն ամենամյա փառատոն է, որը տեղի է ունենում Սեւանա լճի ափին. ֆորումն ամեն տարի համախմբում է 60 երկրներից ավելի ստարտափ թիմերի եւ մասնակիցների ամբողջ աշխարհից եւ համարվում է տարածաշրջանի ամենամեծ տեխնոլոգիական համաժողովը: Ֆասթ Բանկը թվային միտումներով առաջնորդվող բանկ է եւ կարեւորում է իր ներդրումն ու մասնակցությունը SS ոլորտի համաժողովներին:

Ֆասթ Բանկը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից (Գ)

ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՎԵՑ

Երեկ ՀՀ քննչական կոմիտեն պաշտոնապես հայտնեց, որ Շիրակի մարզային քննչական վարչությունում ավարտվել է 2026 թ. ապրիլի 10-ին Գյումրի-Արմավիր ավտոճանապարհին տեղի ունեցած՝6 անձի մահվան ելքով ՃՏՊ-ի դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը: Նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ վարորդը, կորցնելով մեքենայի կառավարումը, դուրս է եկել հանդիպակաց երթեւեկելի մաս եւ բախվել մեկ այլ մեքենայի, ինչի հետեւանքով 6 անձ մահացել է: Կ.Ա.-ի նկատմամբ հսկող դատախազի որոշմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քր. օր. 342-րդ հոդվածի 3-րդ մասով (ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթեւեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգությունն ապահովող կանոնները խախտելը): Նա կալանավորվել է: Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԵՎ YOKO

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՍՏԱՀԵԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

YOKO-ն հնգամյա հայկական բրենդ է, որն իր կայացման ճանապարհին անցել է Հայէկոնոմբանկի հետ համագործակցությամբ:



Ընկերության հիմնադիրներ Ռաֆայել Վարդանյանն ու Դավիթ Լեւոնյանը բնական բաղադրությամբ կերեր են արտադրում շների համար: Ունենալով մրցակցային դիրքեր հայկական շուկայում՝ նրանք քայլեր են ձեռնարկում հայկական արտադրանքն աշխարհին ներկայացնելու համար:

«Ամեն ինչ սկսվեց այն ժամանակ, երբ իմ կյանքում հայտնվեց Յոկոն՝ Ակիտա ցեղատեսակի իմ շունը: Տեղական շուկայում անհնար էր գտնել կերեր առանց քիմիական հավելումների, եւ սկսեցի ինքնուրույն փորձարկումներ անել: Հենց այդ ժամանակ էլ բիզնես սկսելու առաջարկ ստացա Դավիթից, եւ միասին հիմնեցինք բրենդը», - նշում է YOKO-ի համահիմնադիր Ռաֆայել Վարդանյանը՝ ընդգծելով Յոկոյի անփոխարինելի դերը բիզնես գաղափարի կյանքի կոչման գործում:

Ցանկացած բիզնես էլ հասնում է զարգացման մի փուլի, երբ հավելյալ ֆինանսավորում ներգրավելու կարիք է առաջանում: Եվ հենց այդ ժամանակ է, որ բանկի հետ համագործակցությունը ռազմավարական նշանակություն ստացավ:

«Դիմեցինք Հայէկոնոմբանկ, քանի որ ֆինանսավորման պայմանները գրավիչ էին, եւ բանկը պատրաստ էր աջակցել հայկական արտադրանքի զարգացմանը: Եվ մեր պարագայում կարեւորը ոչ միայն վարկային միջոցներն էին կամ անվտանգ փոխանցումները, այլ նաեւ աջակցությունն ու խորհրդատվությունը, որ մշտապես զգացել ենք Հայէկոնոմբանկի հետ աշխատելիս», - նշում է YOKO-ի համահիմնադիր Դավիթ Լեւոնյանը՝ նշելով, որ ներգրավված ֆինանսավորումն ուղղվել է ինչպես բրենդի զարգացմանը, այնպես էլ նոր սարքավորումների ձեռքբերմանն ու արտադրամասի ընդլայնմանը:

Բրենդի համահիմնադիրները, ներկայացնելով իրենց փորձառությունը եւ հետհայացք գցելով իրենց անցած ճանապարհին, վստահաբար նշում են, որ փոքր բիզնեսների հաջողության գրավականը հաճախ ճիշտ պահին բիզնեսում արված ներդրումներն են, եւ չնայած մտավախություններին՝ այս ճանապարհին վստահելի գործընկեր ունենալը կարեւոր է:

Դավիթն ու Լեւոնը մտադիր չեն կանգ առնել. առջեւում արտադրվող տեսականու ընդլայնումն է եւ նոր շուկաների նվաճումը, առաջին փուլում՝ վրացական: Նրանք վստահ են՝ Հայէկոնոմբանկի հետ գործընկերությունն այս փուլում եւս արժեքավոր է լինելու:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

IDBANK-Ի ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲԱՑՎԵՑ

Երեւանի սրտում՝ Արամ Խաչատրյան համերգասրահի տանիքում, IDBank-ի աջակցությամբ բացվեց Khachaturian Rooftop-ը՝ մայրաքաղաքի ամենագեղեցիկ տանիքներից մեկը դարձնելով ամառային մշակութային երեկոների, համերգների եւ անմոռանալի հանդիպումների նոր հասցեն:

Այս համագործակցությամբ IDBank-ը մեկնարկեց իր հիմնադրման 35-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շարքը:

«35 տարվա կուտակած մեր մեծ փորձն ու գիտելիքը մենք շարունակելու ենք ծառայեցնել ոչ միայն մեր զարգացմանը, այլեւ մեր քաղաքի եւ երկրի առաջընթացին՝ մեր հաջողություններով կիսվելով մեր հասարակության հետ: Մենք արդեն հայտարարել ենք, որ 35-ամյակի առթիվ նորոգելու եւ Երեւանին ենք նվիրելու քաղաքի սրտում գտնվող Մոսկովյան պուրակը: Բացի այդ, պատրաստվում ենք միանալ քաղաքի կարեւոր մշակութային ժառանգություն հանդիսացող եւս մեկ նախագծի, որի մանրամասները դեռ չեմ բացահայտի», - նշեց IDBank-ի Վարչության նախագահ Մհեր Աբրահամյանը:

Մոտ 700 հանդիսատես վայելեց Khachaturian Rooftop-ի բացման համերգը: Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ մաեստրո Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ, հայ սիրված կատարողների մասնակցությամբ ներկայացրեց «Երեւան Գալա» համերգային ծրագիրը:

«Երեւանի ամենագեղեցիկ տանիքում ենք: Կարծում եմ՝ Ալեքսանդր Թամանյանը շենքը նախագծելիս մտածում էր, որ ժամանակի ընթացքում այս տարածքը լիարժեք կօգտագործվի» - ասաց Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի եւ «Արամ Խաչատրյան» համերգասրահի տնօրեն Նորայր Նազարյանը:

Այսպիսով, Արամ Խաչատրյան համերգասրահի պատմության նոր էջն արդեն բացված է: Այս տանիքում ամառը խոստանում է լինել զով ու բարձրաճաշակ երաժշտությամբ հարուստ: Օգոստոսին նոր համերգներ ու մշակութային երեկոներ են սպասվում, որոնց իրականացման գլխավոր գործընկերը կրկին IDBank-ն է:

IDBANK-ը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

4-ԱՄՅԱԿ

ՏԵՍԱՆՅՈՒԹՈՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է

Քլոե Քարդաշյանի որդին՝ Թեյթումը, նշել է իր 4-ամյակը: Այդ առիթով Good American-ի համահիմնադիրն իր ինստագրամի էջում հրապարակել է հուզիչ տեսանյութ՝ բաղկացած որդու մանկության տարբեր տարիների լուսանկարներից ու տեսագրություններից:



«Շնորհավոր 4-ամյակդ, իմ հրեշտակ տղա»,- տեսանյութին կից գրել է Քլոեն: Ավելի ուշ նա ինստագրամի Stories-ում նաեւ կիսվել է որդու ծննդյան օրվա լուսանկարով: Թեյթումը կրել էր Bluey մուլտֆիլմի պատկերներով գիշերազգեստ եւ ձեռքին պահել էր Pixar-ի Toy Story-ի հայտնի կերպար Վուդիին: Նրա հետեւում երեւում էին Bluey-ի եւ Toy Story-ի խաղալիքները՝ զարդարված տոնական գլխարկներով եւ կապույտ-սպիտակ փուչիկներով:

Թեյթումը Քլոեի եւ նրա նախկին սիրելիի՝ Թրիստան Թոմփսոնի որդին է: Նրանք նաեւ ունեն 8-ամյա դուստր՝ Թրուն:

Փոքրիկին շնորհավորել է նաեւ ընտանիքի մայրապետ Քրիս Ջենները: Նա ինստագրամում հրապարակել է Թեյթումի ընտանեկան լուսանկարների շարքը եւ նրան նվիրել ջերմ խոսքեր:

«Շնորհավոր ծնունդդ, մեր քաղցր Թեյթում: Դու ամենազվարճալի փոքրիկ բնավորությունն ունես եւ ամենավարակիչ ծիծաղը: Դու մեզ ստիպում ես ժպտալ արթնանալու պահից մինչեւ քնելու ժամը: Սիրում եմ տեսնել, թե ինչպես ես հետաքրքրությամբ, վստահությամբ եւ ուրախությամբ բացահայտում աշխարհը»,- գրել է Ջենները: Նա նաեւ նշել է, որ Թեյթումը ընտանիք է բերել յուրահատուկ ջերմություն եւ անվանել նրան «ամենահոգեւոր փոքրիկ հոգին», որ երբեւէ ճանաչել է: Քրիսը հավելել է, որ Թեյթումը հրաշալի եղբայր է Թրուի համար, սիրելի որդի, թոռ եւ զարմիկ, եւ ամբողջ ընտանիքը նրան անսահման սիրում է:

Քլոե Քարդաշյանը նախկինում բազմիցս խոսել է մայրության մասին: 2024 թվականին The Kardashians ռեալիթի շոուի մի դրվագում նա ասել էր, որ իրեն ստեղծված է զգում մայր լինելու համար: «Ինձ համար չկա ավելի կարեւոր տեղ, քան տանը՝ երեխաներիս կողքին: Ես իսկապես կարծում եմ, որ ստեղծված եմ մայր լինելու համար»,- ասել էր նա:

Ավելի վաղ՝ Elle ամսագրին տված հարցազրույցում, Քարդաշյանը նշել էր, որ սիրում է մայրության բոլոր կողմերը, նույնիսկ դժվար պահերը: Նրա խոսքով՝ երեխաները օգնում են իրեն զարգանալ որպես մարդ, իսկ նրանց ճիշտ դաստիարակելը մեծ պատիվ եւ պատասխանատվություն է, հատկապես այն ժամանակներում, երբ երեխաները շատ վաղ տարիքից հասանելիություն ունեն մեծ քանակությամբ տեղեկատվության:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԴՈՒՐՍ ԵԿԱՎ ԵՐԲՈՐԴ ՓՈՒԼ

Հուլիսի 28-ին ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի 2026/27 մրցաշրջանի որակավորման երկրորդ փուլի պատասխան խաղում Հայաստանի գործող չեմպիոն «Արարատ-Արմենիան» «Թալիաթ» մարզադաշտում հյուրընկալվեց իռլանդական «Շեմրոկ Ռովերսին»: Թիմերի միջեւ առաջին հանդիպումն ավարտվել էր երեւանյան թիմի հաղթանակով՝ 2-0 հաշվով: Պատասխան հանդիպման առաջին խաղակեսում իռլանդական թիմը երկու գնդակի առավելություն ստացավ՝ Հիլի ու Գրինի գոլերի շնորհիվ, սակայն երկրորդ խաղակեսում Սանդրո Լիման աչքի ընկավ «Արարատ-Արմենիայի» կազմում: Հայկական թիմը, չնայած 1-2 հաշվով զիջեց Դուբլինում, հաղթեց ընդհանուր դիմակայությունում 3-2 հաշվով ու դուրս եկավ Չեմպիոնների լիգայի որակավորման երրորդ փուլ: Հաջորդ փուլում «Արարատ-Արմենիայի» մրցակիցը կլինի Սլովենիան ներկայացնող «Ցելյեն», գրում է armsport-ը:

ՄԲԱՊԵՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

Ֆրանսիայի ազգային հավաքականի ավագ եւ հարձակվող Կիլիան Մբապեն արձագանքել է լեգենդար Զինեդին Զիդանի՝ «Եռագույնների» գլխավոր մարզչի պաշտոնում նշանակվելու լուրին: Այդ մասին պաշտոնապես հայտարարվեց երեքշաբթի՝ հուլիսի 28-ին, հայտնում է armsport-ը: «Բարի գալուստ տուն»,- սոցցանցերի իր էջում գրել է Մբապեն: Հիշեցնենք, որ Զիդանի հետ կնքված պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2030 թվականը: Անվանի մասնագետը մարզչական աշխատանքով չէր զբաղվում 2021 թվականից: Նախկինում նա երկու անգամ գլխավորել է Մադրիդի «Ռեալը» (2016-2018թթ. եւ 2019-2021թթ.): Նրա գլխավորությամբ «արքայական» ակումբը նվաճել է 11 տիտղոս՝ այդ թվում երեք անգամ անընդմեջ հաղթելով Չեմպիոնների լիգայում: Հավելենք, որ Կիլիան Մբապեն Ֆրանսիայի հավաքականի կազմում ընդհանուր առմամբ անցկացրել է 106 հանդիպում եւ դարձել 66 գոլի հեղինակ:

ՆՈՐ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՐԶԻՉ

Իտալիայի ֆուտբոլի ֆեդերացիայի մամուլի ծառայությունը սոցիալական ցանցերում պաշտոնապես հայտարարել է ազգային թիմի նոր գլխավոր մարզչի անունը. այդ պաշտոնը ստանձնել է 61-ամյա մասնագետ Ռոբերտո Մանչինին, հայտնում է գրում է armsport-ը:

Մանչինիի աշխատանքի վերջին վայրը եղել է կատարական «Ալ-Սադը», որտեղից նա հեռացել է այս հունիսին: Մինչ այդ անվանի մարզիչն աշխատել է Սաուդյան Արաբիայի ազգային հավաքականում, Միլանի «Ինտերում», Սանկտ Պետերբուրգի «Զենիթում», անգլիական «Մանչեսթեր Սիթիում», թուրքական «Գալաթասարայում», հռոմեական «Լացիոյում» եւ այլ ակումբներում: Մանչինին արդեն ունի Իտալիայի հավաքականում աշխատելու հարուստ փորձ. նա թիմը գլխավորել է 2018-ից մինչեւ 2023 թվականը: Հենց նրա գլխավորությամբ է «Սկուադրա Աձուրան» 2021 թվականին հռչակվել Եվրոպայի չեմպիոն:

Հիշեցնենք, որ Իտալիայի հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Ջենարո Գատուզոն պաշտոնանկ էր արվել այն բանից հետո, երբ չէր կարողացել թիմին դուրս բերել աշխարհի 2026 թվականի առաջնության եզրափակիչ փուլ:

ԱՂՄԿՈՏ ՏՐԱՆՍՖԵՐ

ՄՈՎՍԻՍՅԱՆԸ ԳՆԱՀԱՏԵԼ Է

Հայաստանի ազգային հավաքականի եւ «Կրասնոդարի» նախկին հարձակվող Յուրա Մովսիսյանը մեկնաբանել է Հայաստանի հավաքականի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանի տեղափոխությունը Սաուդյան Արաբիան ներկայացնող «Ալ-Ահլի»: «Спорт-Экспресс»-ի հետ զրույցում Մովսիսյանը նշել է, որ լիովին աջակցում է հայ ֆուտբոլիստի որոշմանը, հայտնում է armsport-ը: «Նրա փոխարեն ես էլ ճիշտ նույն կերպ կվարվեի: Սա ճիշտ ընտրություն է: Մենք միշտ խոսում ենք Եվրոպայի մասին, բայց ի՞նչ տարբերություն, թե ինչ ես ուզում, եթե չկան իրական առաջարկներ: Երբեմն պետք է երկնքից իջնել երկիր: Համոզված եմ, որ կային ակումբներ, որոնք հետաքրքրված էին Սպերցյանի ծառայություններով, բայց նրանք պարզապես գումար չունեին այդ տրանսֆերի համար: Չէ՞ որ նա ՌՊԼ-ի լավագույն ֆուտբոլիստն է: Նոր թիմում մեկ-երկու լավ մրցաշրջան, եւ նա կմեկնի Եվրոպա, հավատացե՛ք ինձ»:

Խոսելով ֆինանսական կողմի մասին՝ Մովսիսյանն ընդգծել է, որ ֆուտբոլիստի համար չափազանց կարեւոր է նաեւ ընտանիքի բարեկեցությունը.

«Նրա ընտանիքը ֆինանսապես ապահովված կլինի երկար տարիներ, ինչը եւս շատ կարեւոր գործոն է: Ի վերջո, ֆուտբոլիստներն ուզում են անել ամեն ինչ, որպեսզի իրենց ընտանիքները լավ ապրեն: «Ալ-Ահլին» հաղթել է Ասիայի Չեմպիոնների լիգան, այնպես որ, ինչո՞ւ չփորձել: Ես շատ ուրախ եմ Էդուարդի համար: Կապ չունի, թե ուր կգնա նա՝ Սպերցյանն ամեն տեղ աչքի կընկնի ու կառանձնանա»:

Լրագրողի այն հիշեցմանը, թե մանկության տարիներին Սպերցյանը խաղերի ժամանակ գնդակ էր մատակարարում հենց Մովսիսյանին՝ վերջինիս համարելով իր կուռքը, նախկին հարձակվողը ջերմությամբ է արձագանքել.

«Ակադեմիայում միշտ էլ հիանալի տղաներ կային, ու Սպերցյանը նրանցից մեկն է: Մենք երբեմն նույնիսկ խաղում էինք նրանց հետ: Հիանալի է, որ «Կրասնոդարում» երեխաներին նման հնարավորություն են տալիս»:

Հիշեցնենք, որ 26-ամյա հայ կիսապաշտպանը «Կրասնոդարից» «Ալ-Ահլի» է տեղափոխվել հուլիսի 7-ին: Ռուսական ակումբի գլխավոր թիմի կազմում Սպերցյանն ընդհանուր առմամբ անցկացրել է 185 հանդիպում՝ դառնալով 58 գոլի եւ 50 գոլային փոխանցման հեղինակ:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում օգոստոսի 2-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Անհաղթ աքլորը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որո՞նք են Պրոբացիայի ծառայության լիազորությունները:

Գագիկ Մանուկյան, 68 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Պրոբացիայի ծառայությունը՝

ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարումը.

ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված անվտանգության միջոցների կատարումը.

ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը.

տրամադրում է պրոբացիայի շահառուի վերաբերյալ խորհրդատվական զեկույցներ, ներկայացնում հաշվետվություններ եւ միջնորդություններ.

վերահսկողություն է իրականացնում պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ.

իրականացնում է հաշտարարություն.

իրականացնում է վերասոցիալականացման միջոցառումներ.

իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են ՁՈՒ պատվո պահակային վաշտում ծառայության անցնելու պայմանները եւ կարգը:

Նվեր Հովհաննիսյան, 42 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Զինված ուժերի պատվո պահակային վաշտում զինվորական ծառայության նշանակելու նպատակով ընտրություն անցկացվում է պատվո պահակային վաշտում համալրման ենթակա թափուր հաստիքների առկայության դեպքում:

Հանձնաժողովի կողմից ընտրություն կատարելիս հիմք են ընդունվում զորակոչիկի միաժամանակյա համապատասխանությունը հետեւյալ պայմաններին.

1) հասակը՝ 180-ից 190սմ,

2) դեմքի եւ մարմնի երեւացող այլ մասերի վրա դաջվածքների եւ սպիների բացակայություն,

3) մարմնի զանգվածի եւ հասակի կանոնավոր հարաբերակցություն,

4) դեմքի գեղեցիկ եւ համաչափ դիմագծեր,

5) առանց որեւէ շտկման եւ ճիշտ գունային զգացողությամբ տեսողություն,

6) ոչ պակաս, քան 6 մետր հեռավորության վրա շշուկային խոսքի ընկալման լսողություն:

ՀՀ ՊՆ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Կապանում «Chevrolet Volt»-ը բախվել է երկաթե արգելապատնեշներին, կոտրել դրանք եւ հայտնվել Ողջի գետում, կա վիրավոր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 11 + 16	+ 22 + 27
Կոտայքի լեռներ	+ 11 + 15	+ 23 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 18 + 21	+ 30 + 32
Գեղարքունիք	+ 11 + 16	+ 20 + 25
Լոռի	+ 14 + 18	+ 20 + 24
Տավուշ	+ 14 + 18	+ 21 + 24
Արագածոտնի լեռներ	+ 10 + 15	+ 23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+ 17 + 22	+ 29 + 34

Արարատ	+ 18 + 22	+ 31 + 35
Արմավիր	+ 19 + 23	+ 33 + 36
Վայոց ձորի լեռներ	+ 11 + 15	+ 22 + 26
Վայոց ձորի նախալեռներ	+ 19 + 23	+ 33 + 36
Սյունիքի լեռներ	+ 11 + 14	+ 19 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 12 + 16	+ 24 + 27
Սյունիքի հովիտներ	+ 17 + 22	+ 30 + 34
Երեւան	+ 22 + 24	+ 33 + 35

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.07.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*